

Գերմանացուց ազգի. մարթ է ասել թէ սոքա յետինքս՝ անդէն յերկրի եւ առաջի Լեւոնի հաստատեցան, յամին 1190, ՚ի գալստեան Փրետրիկ կայսեր, ՚ի մնացորդաց բանակի նորուն, առաջնորդութեամբ որդւոյ իւրոյ համանուան, ընդ որում եկեալ ՚ի Պտղոմայիս՝ անդ հաստատեցին զբուն կարգի իւրեանց: Սոցա չորրորդ կարգապետ էր (Magister լատինարէն, ՚ի մերոցս *մայստր* կոչեցեալ), *Հերման Սալցա* Միսնիացի, որ ՚ի մեծի հանդիսի Ջրօրհնեացն ՚ի Սիս, յամի 1212, նախադասեալ քան զամենայն աւագորեարն՝ ձիավարէր առ երի թագաւորին Լեւոնի. որում՝ յառաջ եւ յետոյ (յամսեան ապրիլի, 1212) շնորհեաց թագաւորն զատ յայլոց բազում կալուածոց գիւղորեից եւ բերդս անուանիս, զԱմուտա եւ զԳմբէթփոր, եւ աւան մի՝ պէսպէս օրինակաւ գրեալ *Սյն*, Ayn, Aym, Hœion, յերկար բանիւք ճշգրտելով զսահմանս նոցին, որպէս յիշեալ է մեր ՚ի ստորագրութեան տեղեացն: Բազում գորովով գրէր Լեւոն եւ ՚ի հրովարտակի իւրում՝ վասն սիրոյ եւ երախտեաց ազգի նոցին՝ յորոց կայսերէ զթագն ընկալաւ, եւ վասն մակաբեան քաջութեան նոցին եւ ինքեան նիգակակցութեան, *եղբայրակից* եւս լինէր նոցա, եւ շնորհէր ազատութիւն բնակութեան՝ ուր եւ կամիցին յերկրի իւրում, առանց ուրուք նեղելոյ զնոսա, եւ այլն: Յետ նորա յաւել եւ յաջորդ իւր Հեթում՝ պարգեւել սոցա զմեծ բերդաւանն Հարուն. առ որովք, եւ ՚ի սահմանս Սարուանդիքարի, էր նոցա հաստատեալ բաժտուն, որպէս եցոյց պայման-նամակ տեառն տեղւոյն, յամի 1271. եւ այս յետին ծանօթ գրաւոր վկայութիւն է կալոյ մնալոյ ասպետացն յերկրի Սիսուանայ ցայնժամ:

Ոչինչ պակաս ՚ի սոցանէ մեծարոյ, սիրելի եւ պիտանի էր Լեւոնի երիցագոյն կարգ Ասպետաց՝ Հիւանդանոցին, որք եւ վաղագոյն քան զբոլորովին նուաճումն Կիլիկիոյ ՚ի մերայոցս՝ հաստատեալ էին յերկրի անդ, որպէս ցուցանեն պարգեւագիրք Բրնձաց Անտիոքայ, անդստին ՚ի կիսոյ ԺԲ դարու (1149), շնորհելով նոցա զ*Սարատա* գիւղ ՚ի գաւառին Մսսայ. իսկ Լեւոն պարգեւեաց նոցա՝ յամի 1210, զմեծ քաղաքն Սելեւկիա, եւ բերդս նշանաւորս՝ զՆորբերդ եւ զԿամարտիաս, եւ թերեւս զբովանդակ գաւառն Սելեւկիոյ, կամ զմեծ մասն Իսաւրիոյ. եւ թէպէտ հարկ եղեւ նոցա յետ մահուն Լեւոնի, առ նրբագոյն քաղաքավայել հրահանգաց, վաճառել անդրէն զՍելեւկիա՝ Կոստանդին Պալլի, սակայն մնացին ՚ի վիճակի անդ յայլ կալուածս եւ ամուրս իւրեանց. որպէս զի մինչեւ ՚ի յետին ժամանակս թագաւորութեան Հեթմեանց, յամի 1330, թղթակցութիւնք լինէին ընդ